

ԽԱՉԻԿ ՄԱՆԱՍԵԼՅԱՆ

ԱՎԵՏԻՍ
ԼՈՒՅՍԻ ՈՒ ՍԻՐՈ

ԵՐԵՎԱՆ - 2007

ԱՎԵՏԻՍ ԼՈՒՅՍԻ ՈՒ ՍԻՐՈ

Բարև', քույր կամ եղբայր.
Ուրախ եմ անսահման,
Որ անցնում ես հիմա այս տողերով,
Քանզի մարմնո՛վ ենք այլ,
Այնինչ Երկնում անծայր
Միասնական ենք մենք ոգեղենով:
Ահա հասնում է ինձ
Ձերմությունը սրտիդ,
Որ անսպառ Լույս ու հրեղեն է
Եվ քո անմահ հոգու
Խորունկ գաղտնարանում
Բազում դարեր առաջ անթեղվել է:
Բարի լուր եմ բերել.
Մոտենում է կրկին
Աստծո Լույսի, Սիրո Ոսկեդարը,
Մեր սրտերի խորքից
Վեր է հառնում Մերը,
Եվ չքվում են ընդմիջտ
Տառապանքներ ու վիշտ
Եվ ինչ կեղծ է, բիրտ ու անարդար է:
Ուստի ների՛ր, խնդրեմ,
Եթե իմ այս գրքի
Որոշ խոսք ու բառեր
Քո ականջին թվա, թե օտար եմ...

ՄԵԿ – ՄԵԿ + ՄԵԿ = ՄԵԿ

Երկու մաս կա՝ երկու էակ, իմ հոգում,
Որ վիճում են, անվերջ կռիվ բորբոքում.
Բայց այս ո՞վ է վերից նայում երկուսին
Ու հորդորում, որ հաշտ լինեն միասին...

ՀԻՍՈՒՄ

Միշտ մեր ներսում ես Դու ու Խոսքդ սերմանում ես,
Իսկ մարդիկ սպասում են դեռ Քո Գալստյանը.
Ամեն ինչ նույնն է կարծես, ինչպես որ այն հնում էր.
Անհաղորդ են մարդիկ, և կեղծված է Մատյանդ...

Սակայն չես վհատվում, ոչ էլ զարմանում ես,
Որ դեռևս կարծր է մեզ պարուրած պատյանը,
Ճառագում ես Քո Լույսը և անխոնջ դեռ ջանում ես,
Որ հասու դառնան մարդիկ Սիրո Հայտնությանը...

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հիսուս ասում է՝
Այնպես աղոթեք
Խոնարհ ձեր սրտում,
Որ ընդունելի
Լինի ձեր խոսքը
Մեր Հայր Աստծուն.
Ոչ թե լարովի
Տիկնիկի նման,
Եվ ոչ թե դրսում,
Այլ ջերմ սիրով լի,
Խաղաղ, հնազանդ՝
Ձեր սրտի ներսում:
Չի՞ հանդուրժի Նա
Անհասկանալի
Ձեր աթեիզմը,
Ոչ էլ դարձն ասյրած
Հնոտիների
Անախրոնիզմը:
Անտես կանի Նա
Ձեր առևտուրը՝
«Դու՛ ինձ, ես էլ՝ քեզ»,
Որքան էլ լցնեք
Դրսի մատուռը
Մոմերով ձեր կեզ:
Հաճո չէ Սրտին
Ո՛չ ձեր մատաղը
Անմեղ գառնուկի,
Ո՛չ էլ դոգմատիկ,
Պերճաշուք տաղը
Ճոխ ծիսակարգի:

Ձեր շուրջը եղած
Ունայն պատրանքից
Մեկուսի եղեք,
Միրով խաղաղված՝
Ձեր սրտի խորքից
Աղոթքն այս հղեք.

—Հա՛յր մեր Երկնավոր,
Սու՛րբ է Անունդ.
Գա՛թող փառավոր
Արքայությունդ.
Քո Կամքը լինի
Ինչպես Երկնքում,
Այնպես էլ Երկրում.
Տու՛ր մեզ Լույս ու Մեր,
Հավատ ու Հույսեր,
Հաց հանապազօր,
Ների՛ր մեր գործած
Մեղքերը բոլոր՝
Թե՛ հին և թե՛ նոր,
Ինչպես ներում ենք
Մենք էլ մեր կյանքում
Մեր դեմ գործողին.
Եվ մեր ամեն մի
Փորձության պահին
Մի՛ թող, որ անդարձ,
Դառնանք չարին գոհ,
Քանզի փառավոր
Արքան ես հզոր՝
Արարածներիդ,
Աշխարհի համայն,
Հավիտյանս, Ամեն:

ԱՂՈԹՔ ԱՌ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ

–Ցնծա', ո՞վ Սուրբ Կույս,
Բարեշնորհ Մարիամ,
Սու՞րբ Աստվածամայր,
Տերը քեզ հետ է.
Օրհնյա՞լ ես Երկրի
Բոլոր կանանց մեջ,
Օրհնյա՞լ է և սուրբ
Պտուղն արգանդիդ,
Քանզի կամեցար
Մեր հոգու Փրկչին
Ծնել քեզ Որդի.
Արդ, թող մայրանան
Ու Որդի ծնեն,
Սրբիդ նմանակ
Հոգիներն համայն,
Հավիտյանս, Ամեն:

ՍՈՒՐԻԱ

Օ~, հրաշունչ Ազնի,
Տիեզերական Արև,
Սուրիա, անմահ Հոգի,
Քեզ ջերմ բարև~, բարև~...
Բորբ է, կանչում է հար
Հուրը Հայրական Տան,
Մեր է, կրակ անմար`
Միրո անեզրության:
Այնքա~ն մոտ ես դու ինձ,
Իմ ներսում ես ահա.
Օ~, թող երկար տևի
Հաղորդության պահը...

ԱՐԵՎԱԳԱԼԻ ՀԻՄՆ-ԱԳՈԹՔ

Բարի Լու՜յս, Արև, հրաբորբ Արա.
Բարի Լու՜յս, Երկիր, սիրասուն մեր Մայր.
Ողջո՜ւն, Արամագո՛ Սանատ Կումարա.
Ողջո՜ւն, Ուսուցիչ՝ Տեր մեր Մայրեյա.
Ողջո՜ւն հրեղեն հոգիներ անմահ՝
Ջրադաշտակերպ, Վահագնանման.
Ողջո՜ւն, Աշխարհի Տեր Հաութամա՛
Մտահոգ Երկրի փրկության համար.
Ողջո՜ւն, Տեր Հիսուս, Որդի մարմնացյալ.
Ողջո՜ւն քեզ, Մարիամ, սուրբ Մայր համբարձյալ:

Ողջո՜ւն քեզ, Հելիոս, անմար Արեգակ,
Արարչական Լույս, Աստվածային Ակ,
Ալեծավալ Սեր, անխորտակ Հույսեր,
Անհատակ գավաթ, անասան Հավատ,
Ահեղածուփ եռք, ամենահաս ձեռք,
Անգերագանց կառք, անխամբելի փառք,
Աշխարհաշեն հուր, անեզրական հուն,
Անմահության քար, անկողմնակալ բար,
Անխտոր թռչուն, անխաթար հնչյուն,
Արեգակ արդար, քեզ ողջո՜ւն, ողջո՜ւն:

Բարի Լու՜յս, Արև, հրաշող Արա.
Բարի Լու՜յս, Երկիր՝ տառապյալ մեր Մայր,
Ողջո՜ւն քեզ բոլոր Լույս Հոգիներից,
Մերովբեներից, Քերովբեներից.
Քեզ Սեր է հղում տիեզերքն արար,
Սեր են ճառագում մայր, մանուկ ու այր,
Սեր են ճառագում ծառ, ծաղիկ ու արտ,
Ջրերդ գվարթ, լեռներդ հայարտ.

Մեր է տարածում գովաշունչ քամին
Արևագալի պայծառ այս ժամին:

Ողջո՞յն Քեզ, Հայր մեր, Համասփյուռ Աստված,
Տիեզերական Սիրո Առեղծված...

ԵՍ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՄ

Ես կամենում եմ ամենքին սիրել՝
Բացելով սրտիս գաղտնարանը խոր.
Կամենում եմ ձեզ սիրով նվիրել
Երկնային մեր Հոր գանձերը բոլոր:

Իսկ դուք ինձ տվեք ձեր մեղքը թաքուն,
Եվ ես այն կայրեմ իմ սրտի բոցով,
Ինձ տվեք անմար վիշտը ձեր հոգու
Եվ ձեր դարավոր տառապանքը ծով:

Ես կամենում եմ՝ կամենաք դու'ք էլ,
Եվ մեր սրտերի լույսը վարարուն
Ի չիք կդարձնի թույն, կասկած ու քեն,
Որ ծնում են սոսկ աղետ, ավերում:

ՄԱՂԹԱՆՔ

Բանաստեղծի ամեն մի երգն աղոթք է մի,
Հույսի շող է՝ հղված հոգուն ընթերցողի,
Լույսի հոսք է՝ աներևույթ ու անմարմին,
Որ հորդում է նրա գրած ամեն տողից:

Ջգու՜յշ թերթեք դուք էջերը նրա գրքի,
Ակնածալից ու հարգալից սրտի դողով,
Ու թող սահի ճառագայթը ձեր հայացքի
Բարի ու ջերմ սրտից բխած նրա տողով:

Թող պոետներ լինեն բոլո՜ւր, բոլո՜ւր մարդիկ,
Թող բոլորը ընթերցողնե՛ր լինեն բարի,
Ու թող հառնի նրանց սրտում Աստծո Որդին,
Որ իր Սերը, Հավատն ու Հույսը արարի..

ԿԱՍՈՔՆ ԱՍՏԾՈՆ ԵՎ ԱՆՅՅԱԼԻ ՄԵԾԵՐԻ

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...
Վ. Տերյան

Ես նորօրյա պոետն եմ մեր վերածնվող նոր երկրի
Եվ երգում եմ նրա փառքը նոր երգերով, նոր խոսքով,
Նոր երգեր եմ բերում ես ձեզ Բարու, Սիրո ու Հրի,
Այն պոետն եմ, որ չի պղծել դեռ իր խոսքերն անեծքով:

Այն «գանգրահեր տղան» եմ ես լուսապայծառ գալիքի,
Որ հեծել է Աստվածային Ոսկեդարի ալիքին.
Կարթնացնեմ ես ձեր հոգին հազարամյա քնից խոր,
Որ վեր հառնեք եղեգներից՝ որպես Վահագն մի նոր:

Ելե՛ք, ելե՛ք, Հայոց երկրի արիաժին գավակներ,
Հնչում են ձեր հին ոստանում նոր երգեր ու նվագներ,
Հորդում է Լու՛յս, հորդում է Մե՛ր տիեզերքից վարարուն,
Արարիչը Արարատում Նոր Աշխարհ է Արարում:

Օ՛, մի՛ փորձեք լարվել իմ դեմ, ոչ էլ հանեք խարույկի,
Քանզի ինքս եմ սլացք ու նետ և լեզվակը կրակի.
Զգուշացե՛ք իմ դեմ կամա թե ակամա ելնելուց,
Հավերժական Հրո բոցում անվերադաճ այրվելուց:

Անկասելի է Կամքն Աստծո՛ւ ժամանակի Հրաման,
Որին զգաստ ու հնազանդ պարտավոր ենք ենթարկվել.
Պարույրի նոր մի գալար է, մի նոր փուլ է արարման,
Արարիչը նման պահի չի հանդուրժի կատակներ...

ԻՆՉՈՒ՞ ՈՉ

«Տեղից վեր կացողը» պետք է փորձի երգել.
«Տեղից վեր կացողը» պետք է սղվի Հոր Տուն.
Պետք է բացի սիրտն իր ազատ ու անարգել,
Բա՛վ է, մարդիկ, թափեք անմիտ նախանձ ու թույն:

«Տեղից վեր կացողը» պետք է բացի հոգին
Ու արարի բարին արարչական սիրով.
Պետք է սիրի գոնե նա իր կյանքում մեկին
Ու պարուրվի սրտի կենսաթոթիո հրով:

Էլ չի հարատևի, ով դատարկ է հոգով,
Ով մեռած է արդեն հենց իր ծնված օրից,
Ով շարժվում է իր հին, պապենական կարգով՝
Դժգոհելով կյանքից, բախտից ու բոլորից:

Անձնագիրը մարդու պետք է լինի մի գիրք,
Որ նա պետք է գրի հասուն դառնալուն պես.
Պետք է գրի գիրքն այդ՝ թեկուզ չունենա ձիրք,
Եվ պարզերես կանգնի շրջապատին ի տես:

Ի՛նքը պետք է լինի իր իսկ քննադատը
Եվ հարկ եղածդեպքում նոր գիրք գրի կրկին.
Էական չեն փառքն ու մոռացության պատը,
Էական է միայն՝ Լույս ճառագի հոգին:

ՏԵՐ, ՆԵՐԻ՞Ր ՆՐԱՆՑ

Տգետի համար իմաստունն անխելք,
լավագույն դեպքում՝ շիզոֆրենիկ է,
Որ հոգ չի տանում ո՛չ փողի մասին,
ո՛չ վայելքների, ո՛չ էլ հագուստի:
Անգետի համար իմաստուն խոսքը
մի ուտելիք է կամ ըմպելիք է,
Որ բոլորովին հարմար չի գալիս
նրա ճաշակին, խելքին, ապրուստին:

Նրան իր մարմնի պետքերից այն կողմ
ոչինչ չի հուզում, հետաքրքրի՛ր չէ,
Այն, ինչ չեն տեսնում նրա աչքերը,
նշանակում է՝ գոյություն չունի:
Ոչ մի բան գանձ չէ, եթե այն տանձ չէ,
գինի չէ ընտիր, չամիչ չէ, չիր չէ,
Կամ էլ թանկարժեք մի դեղահաբ չէ,
որ ակնածանքով իր ներսն ընդունի:

Միայն թե առողջ լինի ցուլի պես,
ցավեր չունենա, չհիվանդանա,
Միայն թե կողքի իր հարևանից
լավ ապրի մի քիչ, պակաս չմնա,
Միայն թե գլխին քարոզ չկարդաս,
թե ճիշտ չի ապրում, որ ճիշտը դա՛ չէ.
Թե շատ համառես՝ ձեն-ձենի կտան,
ամբոխ կկազմեն ու քեզ կխաչեն:

Ու չեն իմանա, որ իրենց համար,
սուկ իրե՛նց համար դու ելար խաչին,
Ու դու կաղոթես՝ Տե՛ր, ների՞ր նրանց,

քանզի չգիտեն, թե ինչ են անում...
Կանցնի երեք օր, ու քեզ կկոչեն
անհաս ու միակ Որդի Արարչի,
Որ քեզնից հեռու՝ նորից խորանան
պիղծ վայելքների իրենց ամանում:

ՄԱՅԱ

Գործում է դեռ գայթակղիչը, դեռ ուժ ունի,
Պինդ նստած է ուղեղների խոր ծալքերում:
Դեռ մարդն էլի՜ չի իմանա, որ մահ չունի,
Որ ներկա է նաև Բարձր Երկինքներում:

Նա դեռ երկա՜ր Սիրո մասին չի իմանա,
Կկարծի, թե մարմին է սոսկ ու մի անուն,
Եվ հայելու առջև կանգնած՝ կտեսնի նա
Մարմինը իր և ոչ՝ միակ իր թշնամուն:

Նա դեռ երկա՜ր կմնա իր մարմնի գերին,
Սիրո տեղ սեքս կճաշակի, բերկրանքի՝ քեֆ.
Ու չի՜ ջոկի նա դեռ երկար չարն ու բարին՝
Տարածելով իր չորս բոլոր չարիք ու քե՛ն:

ՉԱՐԻ ՁԵՆՔԵՐԸ

Սկզբում չարը մարկային հոգում սերմանեց ահը,
Որից հետո նոր՝ կերպարանք առավ չարանենգ մահը.
Երկուսն էլ կեղծ են, պատրանքայի՛ն են դրանց հիմքերը,
Բայց միլիոն տարի դրա՛նք են եղել չարի զենքերը:

Երբ Գիտելիքը, Հավատն ու Սերը խորտակեն ահը,
Մարդկանց աշխարհից միրաժի նման կցնդի մահը.
Եվ այնժամ մեր դեմ կբացվեն Սերն ու անմահությունը,
Որ ի սկզբանե եղել են և են մեր էությունը:

ԷՍ ԿԱՐԳԻ՝ ՎԱՐՔ ՉԱՐՔԻ

– Հե՛յ, լավ մանրու՛ք,
Ասե՛ղ, հուլու՛նք...
Հ. Թումանյան

– Հե՛յ, «լավ» գովա՛ղդ, անոնս ու սեքս,
Ճիշտը ստով համենված տեքստ,
Տեռոր, թալան, ճարպիկ ճանկում,
Մարդաորս ու առևանգում,
Փրփուր սերիալ, թունդ մարտաֆիլմ,
«Լավ» ծեծ ու ջարդ, տռփանք ու տիղմ,
Աննպատակ հերոսություն,
Անմիտ մարդկանց երկխոսություն,
Անգլալեզու ճոխ հայիոյանք,
Ճիվաղածին մտքի խոյանք,
Հետույքների փառաբանում,
Հետույքաբուխ առոգանում,
Կեղծված անցյալ, պղծված բարձրյալ,
Բարի դահիճ, սարդի մահիճ,
Գերմարդ, չղջիկ, գերսեքս աղջիկ,
Գանգստեր, քիլեր, կովբոյ դիպուկ,
Հումոր տափակ, ծիծաղ տափուկ,
Հարուցված գործ ու մահափորձ,
«Լավ» դետեկտիվ, «լավ» լաց ու կոծ,
Մոլագարներ արյունախում,
Թաղում, բախում, ծախում, կախում,
Մարմնի վաճառք ու պորտապար,
Կրքոտ սիրո ծաղրանկար,
Գայթակղող բաց ազդր ու ուս,
Անոթ ծածկող փալաս-փուլուս,
Անոթ բացող կիսահագուստ,

Յանկասերի վարք ու սայրուստ,
Քսուք, օճառ, քոսի լավ ճար,
Մագերին՝ թեփ, պատերին՝ ծեփ,
Գունեղ ներկեր, անմիտ կրքեր,
Ներկած ատամ, եղունգ, լեզու,
Դաջում, փետում, զեղում, վիժում,
Անուշահոտ թույներ բազում,
Թույների դեմ՝ հակաթույներ,
Բույծերի դեմ՝ մակաբույծներ,
Օդաննաներ, Ձեփյուռաներ,
Ադամանդներ, շափյուղաներ,
Մադոննաներ ու դոննաներ,
Թիթեռակյանք նոր մոդաներ,
Ճողված քայլվածք, պաղված նայվածք,
Խեղված տոտիկ, շեղված տիտիկ,
Մոդել դռի՝ գրանդ պրի,
Ֆատան-ֆլան, բիզնես պլան,
Դրսի չոլեր, օտար քոլեր,
Գերեվարում, ավարառում,
Մետաղ, շառաչ, երգի բառաչ,
Տգիտության մրցույթ անուս,
Համբավի ձիրք, գումարի հույս,
Աստղահիվանդ, աստղագուշակ,
Կախարդ, գրբաց, հեքիմ, բուժակ,
Ամեն լավի աղավաղում,
Կեղծում, եղծում ու սվաղում,
Քաղաքակիրթ կրքերի եռք,
Փողի լվացք ու կեղտոտ ձեռք,
Կեղծ բարեգործ ու կեղծ հերոս,
Կեղծ բարեպաշտ ու կեղծ քարոզ,
Շահամոլի արդարացում,
Հանուր կյանքի վատթարացում,

Ընտրյալ խավ, բարձր ժողով,
Մութ գործարքներ, վարկեր փողոտ,
Առերևույթ՝ օրենք ու կարգ,
Աներևույթ անպատկառ վարք,
Մեղքի բարդում – ճեղքի հարթում,
Բողոքի ճիչ – լկտի քրքիջ,
Չնչին նպաստ – զեխության փաստ,
Չրի փողեր, մոլի խաղեր,
Ձահել սրտի ուղուց շեղում,
Մանկան անմեղ հոգու խեղում,
Ժամանց – հոթել – փողոց նետել,
Չառ ու վիզա քարտ ու քիսա,
Լոտո ~, ավտո ~ ...
– Է ~, լավ, հետո ~...

Էսպես խուժելով ալիքից ալիք՝
Իբրև խոսափող և իբրև բանբեր
Կառչած էկրանին հեռատեսիլի,
Իբրև օրհասի գագան վիրավոր,
Հտալիտ ձայներով՝ մերթ գոռ, մերթ կերկեր,
Շատերի աչքին անտեսանելի
Երախը բացած, նենգ ու թունավոր՝
Հոգեորսով է զբաղված էլի
Մարդու կերպ մտած չարքը դարավոր...

7 ԱՆՔԱՄ 70

Եթե փորձ անես ձեռնարկել դու մի իրոք բարի գործ,
Ապա պատրաստվիր քո կողքին տեսնել ոմն չարագործ,
Ով իր վարմունքով ամեն ինչ կանի, որ քեզ խանգարի,
Ի սկզբանե քո նախաձեռնած գործը խափանի:

Եվ իմա՜ստ չունի հակադրվելը այդ չարին իգուր,
Մեկ է՝ կստիպի, որ լինես ջրից լուռ ու խոտից ցած:
Հակառակն արա. եղիր ջրից ցած, նաև խոտից լուռ,
Որ չար ուժերը քո խոնարհ վարքից մնան զարմացած:

Մեկ-երկու անգամ քեզ կընդդիմանան ու ձեռ կքաշեն,
Եթե չկռվես չար ուժերի դեմ իրենց իսկ զենքով:
Եվ միայն այնժամ գործդ սկսիր դու աշխարհաշեն,
Երբ չարի նետերն անվնաս, անգոր անցնեն քո կողքով:

2000 ՏԱՐԻ

Հիսուս ինչ ասաց, դուք ի՞նչ եք ասում...
Մարմնական խեղճն եք Աստծուց վեր դասում,
Դեռ չճանաչած ձեր սրտում Աստծուն՝
Նրա անունից ստում եք անգուսպ:

Եվ սևազգեստ ագռավների պես
Վաղու՜ց թառել եք դուք Հայոց թառին,
Տենչում եք անվերջ դուք սգո հանդես՝
Խավարին կառչած ու մեռած տառին:

Ախր, այդ ինչպե՞ս ոմն Գրիգոր՝
Խավարից ելած, համառ, կամակոր,
Սգավոր դարձրեց խնդուն աշխարհը՝
– Ավերե՜ց Հզոր Աստծո Տաճարը...

Օ՛, քավված չէ դեռ մեղքը Տրդատի.
– Տե՛ս, հեծեծում է ժողովուրդը քո,
Դեռ ենթակա է նա արդար դատի՝
Տիեզերական անխախտ Օրենքով:

– Հե՛յ գիտի, Աբգար, բարեսի՛րս արքա,
Որ ճանաչեցիր Հիսուսին Որդի,
Խնդրեցիր, որ Նա քո երկիրը գա,
Քո կողքին լինի, մոտ լինի սրտիդ:

Իսկ այսօր, ահա, թեթև մի ձեռով
Համարվել ես դու օտար, ասորի...
Ախր, այդ ինչպե՞ս, ախր ի՞նչ ձևով
Ժողովու՜րդ Հայոց, հասար այս օրին...

Ո՞վ է մեղավոր. Գրիգորն էլի,
Հազկե՞րտը գուցե, Վասակ Սյունեցի՞ն,
Վա՞րքը թուլակամ գահակալների,
Թե՞ քերթողահայր մեծ Խորենացին:

Հերի՛ք է սակայն, եկեք շղատենք,
Այլ բարի հիշենք անուն առ անուն.
Առանց այդ էլ շա՛տ զոհեր տվինք մենք
Ավարայր-Գեր Զոր-Ադանա-Վանում:

Մհա գալիս է Նոր Արևագալ,
Մեզ հետ է արդեն Արամազդն Հգոր.
Ժողովու՞րդ Հայոց, էլ պետք չէ սգալ,
Փեսա՞ն է գալիս, հե՛յ, շնորհավո՞ր...

ՈԳՈՒ ՍՈՎ

Անմահ Վարպետի մի կանխատեսմամբ՝
Վաղու՜ց է չոքել սովը մեր բկին,
Ու մարդու հոգին սին խելքի դրոմամբ
Քաղցու՜մ է վաղուց, քաղցու՜մ է կրկին:

Կարոտ է վաղուց մեր սիրտը Սիրո
Ու չի ճառագում «ի խորոց սրտի».
Խարխափում ենք մենք խավար գիշերով
Ճանապարհներում կեղծի ու ստի:

Փորձարարնե՛ր ենք մենք աստվածային
Ու փորձ ենք անում ինքներս մեզ հետ,
Թե որքա՞ն չարի կղիմանայինք,
Եթե չերևար Լույսի արահետ:

Ավա՛ղ, փորձն արդեն փորձա՛նք է դառնում,
Ժամանակն է, որ վերադառնանք Տուն.
Մեր հոգում Աստծո Որդին է հառնում՝
Թե լինենք սիրող ու լինենք արթուն:

Էլ չի հանդուրժի Մայր Երկիրը մեզ,
Որ շարունակենք մեր խաղը մոլի:
Թա՛փ կտա իրեն աղետով մի թեժ,
Որ սթափեցնի բոլոր-բոլորին,

Որ ականջալուր լինենք ի վերջո
«Ի խորոց սրտի» Սիրո մեղմ ճայնին
Ու լինենք մեր Հայր Աստծուն ճանաչող,
Որ ներում է մեզ այնուամենայնիվ...

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

«Աշխարս մե փանջարա է», լա՛վ է ասված, խոսք չկա',
«Մըտիկ տըվողըն կու խուցվի»... եթե սրտում Սե'ր չկա:
«Կու բեզարին» աշուղները Աննաներին գովելուց,
Ողբի լաց ու կոծով նրանց բայաթիներ ձոնելուց:

«Բըլբուլի հիդ լաց ին ըլում», սմբուլի հետ անում նագ,
«Վարդի նման բաց ին ըլում»... մահիճներում ուրիշի.
«Պըտիտ եկար»՝ խավխի դարդին սիրտդ պահած որպես թաս,
Եվ ուզեցիր, որ աղա-դուլ, արքա-նոքար բարիշին:

Անցա՛ծ լինի, Սայաթ-Նովա, ուրիշ էր քո հունարը,
Ների՛ր, որ ինձ էլ չի հուզում քո լալազին քնարը.
«Գուն էն գլխեն իմաստուն իս», ո՛վ մեծ սուֆի հանճարեղ,
Բայց ուրիշ էր վախտն ու բախտդ, չկա՛ր ուրիշ սրտի դեղ...

ԿՈՒՎ-ԿՈՒՎ

– Շրա՛խկ, թոցրի՛նք մենք ձեր գլուխը.
Դե, մեռե՛ք, հայե՛ր:
– Տը՛ռռռ, կոտորեցի՛նք ազգերի կեսը.
Ուռա՛, հայլ հի՛տլեր:
– Բու՛մ, բու՛մ, Ճապոնիա, մեր դեմ խաղ չկա.
Սսկվի՛ր, Վիետնամ,
Քը՛խ, սադա՛մ, մեռի՛ր, դիակ ես արդեն.
Դուք սու՛ս, թալիբնե՛ր,
Դու՛րս եկ, բեն լադե՛ն,
Տեսել ենք տեղդ,
Շատ թանկ ծախեցիր միրուքդ ու բեղդ:
– Վու՛յ, կպայթացնեն երկնաքերներդ,
Շատ մի՛ հոխորտա, կռվազան յանկի՛,
Կարոտ չեմ ոչ քեզ, ոչ էլ քո բանկին.
Կհայտնեն ջիհադ, կանեն նամազ մի,
Ու գլխիդ կիջնեն տեռոր, ցունամի:

Ա՛յ քեզ կռիվներ, ա՛յ քեզ ծեծ ու ջարդ...
Տարիներ անցան միլիոն թե միլիարդ,
Բայց մանկամիտ ենք մնացել, ավա՛ղ,
Չենք կարող մնալ տեղներս խաղաղ,
Խաղում ենք տուն-տուն ու կռիվ-կռիվ,
Արածն ավերում ու մատնում հրի,
Մեզ պահում ենք չար, պահում ենք բռի,
Բզկտում իրար բարքերով հռռի:
Ունեինք, ունենք և հոգատար Հայր,
Ունեինք, ունենք և ստնտու Մայր,
Համբերությունից հանում ենք Հորը,
Քաշքշում, տանջում մեր Երկիր-Մորը,
Ո՛չ խոսքն է ազդում, ո՛չ ծեծ ու խրատ,

Մեկ-մեկ ենք լսում ու կիսատ-սյռատ:
Կլանված ենք մեր նյութեղեն խաղով,
Կեղծ բարիքներով ու առատ փողով:
Չեն ազդում նույնիսկ երկրաշարժները,
Չեն ազդում նույնիսկ փոթորիկները:
Կուզենք՝ ինքներս կանենք երկրաշարժ,
Գետի, ցամաքի կղզու տեղաշարժ,
Կուզենք՝ կավերենք երկրագունդը ողջ,
Կայրենք ամեն ինչ, կկիզվենք ողջ-ողջ:
Միայն թե խաղը կիսատ չմնա,
Միայն թե խրատ տվող չունենանք,
Չհասունանանք, ճիշտը չիմանանք...

ԱՌԱԿ ՉԿՆԻԿԻ ՄԱՍԻՆ

Չկնիկ, լո՛ղ տուր, լո՛ղ արա...
Ա. Խնկոյան

Չուկը ձկնիկին ասում է՝ որդիս,
Ջրում ենք ապրում.
Ջուրն է մեր կյանքի աղբյուրը բարի,
Քեզ խելոք պահիր ու ձկնավարի:

Մարդը ասում է՝ ձկնի՛կ, ծովում ես,
Որ կարող է և փոթորկվել ահեղ.
Հենց որ մեծանաս, խնդրեմ, կարող ես
Թավայում լինել, հետո՝ ուրիշ տեղ...

Լուսինն ասում է՝ ձկնի՛կ, ապրում ես
Դու Երկրի վրա.
Մարդն էլ է այդտեղ: Շատ զգու՜շ եղիր
Չարանենգ ու պիրկ ուռկանից նրա:

Արևն ասում է՝ ձկնի՛կ, աշխարհը
Լայնարձակ է շատ ու խորհրդավոր,
Բայց ես ամեն օր
Ճառագում եմ ջերմ իմ լույսն ու սերը,
Որ մարդ ու ձկնիկ, ամեն շնչավոր
Ապրեն իրար հետ հաշտ ու բախտավոր:

Աստված ասում է՝ ձկնի՛կ, ինձ հետ ես,
Ինձ հետ են նաև մարդ, Երկիր, Երկինք,
Լուսին, Արեգակ: Միասին ենք մենք:
Միասնական է աշխարհը արար
Հավերժության մեջ անհուն, անսահման:

Դե՞հ, ձկնի՛կ, ասա՛, որտե՞ղ ես հիմա,
Որտե՞ղ է տունդ աշխարհում արար:
Դե, լա՛վ, մի՛ խայտա այդպես դողահար,
Չկնի՛կ իմ փոքրիկ, լո՛ղ տուր, լո՛ղ արա...

Ընթերցողն իմ այս, թե քեզ նկատի,
Չէ՛, քեզ չի ուտի և ոչ էլ կատի.
Նա հագիվ միայն իր հարցը պարզի,
Թե ո՞ր է ձգտում և ի՞նչ երագի,
Ինչու՞ է այդքան նա ալեկոծվող,
Այդպես ավերող,
Ու՞ր է սլանում իր կյանքի փորձով
Եվ ի՞նչ հովերով,
Ինչու՞ է կյանքում անհանգիստ անվերջ
Ու կրքին գերի,
Ի՞նչ է որոնում սերիալների մեջ
Ու սուտ գրքերի:
Ինչու՞ է ուզում ինքն իր մեջ փակվել,
Միրուց հեռանալ,
Ու գոնե մի պահ չներդաշնակվել
Բնությանն արար:

Է՛հ, փոքրիկ ձկնիկ, լո՛ղ տուր, լո՛ղ արա,
Մարդկային հոգսը թո՛ղ տուր, թո՛ղ արա...

ԿՇՈՄԱՆ ՕՐԸ

Ամոթ է ասել՝
Շատերին գուցե
Հարկ է, որ դասենք
Խոզերի^օ կարգը...
Քանզի երբևէ
Վերև չեն նայում,
Ոչ էլ պահում են
Տանտիրոջ հարգը:
Կուշտ ուտել գիտեն,
Մեկ էլ ախտոռը,
Մինչև գա իրենց
Կշռման օրը:

ՋԱՐՄԱՆԱԼԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Նման է անշուշտ, ի՞նչ ասել կուզի,
Պինդ կեղևի տակ պարփակված ուղեղ՝
Երկու կիսագունդ:
Վերնատնեքով նման են անշեղ
Մարդը՝ ընկույզի,
Ընկույզը՝ մարդու:
Առատ բերքն ենք մենք
Մայր մոլորակի մեծ ընկուզենու.
Ուզենք, թե չուզենք՝
Մի գեղեցիկ օր ցած ենք ընկնելու...
Տեղյա՞կ եք արդյոք՝
Հասել է օրը բերքահավաքի.
Թո՞ղ որ ամեն ոք
Արժանի դառնա Տիրոջ տոպրակին:
Տարբեր ենք, ավա՞ղ,
Մեկը հասել է, մյուսը՝ դեռ խակ:
Մեկը դարձել է ագռավի ավար,
Մյուսին՝ տարել մի գող կաշաղակ:
Մեկը ամբել է իր կեղևի տակ,
Մյուսին՝ կերել չարության որդը:
Մեկը կերել է թունդ կարկտաթակ՝
Խռովել, փտել մինչև կոկորդը:
Մեկը բուսել է ամենավերում,
Արևահարվել ժամանակից շուտ,
Մյուսը տեղ է ընտրել ստվերում,
Կմնա, մինչև ձմեռը գա ցուրտ...

Քիչ են, ավա՞ղ, այն ընտրյալները,
Որոնց կգա ու կտանի Տերը:

ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Մանուկ եմ դեռ ես տասը տարեկան
Եվ երագում եմ իմ լույս ապագան.
Ինչ էլ որ դառնամ, ինչ էլ որ լինեմ՝
Իմ հայրենիքին ես պիտանի եմ:

1966 թ.

ՀԻՄԱ

Դու, որ խաղում ես գիտնականի դեր,
Քո ուշքն ու միտքը տվել ես նյութին,
Անկենդանի մեջ խարիսխ ես նետել,
Հետևում ես սոսկ նրա բնույթին:
Ամենուր կյանք է, վկա՜ է Աստված,
Քո մե՛ջ իսկ ունես հազար առեղծված:

2006 թ.

ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ ՀԵՏՈ

Ի սկզբանե Սերն Արարչի Բան է դառնում, Բանը՝ հող,
Հողից դալար ծիլ է ելնում՝ կենսաբոստան, լուսաշող.
Երբ հասնում է Լույսը Սիրո գոհարանին Արարման,
Արարիչը Սիրո հրով Արարում է մի նոր Բան:

2046 թ.

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ

Ընթերցո՛ղ իմ ազնիվ,
Ահա հրաժեշտի
Իմ այս խոսքին հասար,
Ուստի թու՛յլ տուր հղել
Երախտիքս, բարի
Մաղթանքներս հազար:
Եղի՛ր անկողմնակալ,
Լսի՛ր սրտիդ ձայնը
Ու քո սրտո՛վ դատիր.
Հուսով եմ՝ այս անգամ
Չի հասնի քեզ թույնը
Ոչ մի քննադատի:
Քնած ու կույր է նա,
Ով տեսնում է միայն
Պոետական հնարք.
Բայց արթուն է հոգով,
Ով զգում է սրտով
Միրո թրթիռ, կրակ:
Սրտի՛դ արա հարցում.
Ու՞մ հետ էր զրուցում
Մեծն Նարեկացին,
Ո՞ր անհունին ձգտում,
Եվ ու՞մ ձայնն էր լսում
Հանճարեղ Լոռեցին.
Այդ ի՞նչ անանձնական
Ուրախություն տենչաց
Միսաք Մեծարենցը,
Եվ ի՞նչ արևաբաղձ
Երգեր չերգեց, ավա՞ղ,
Եղիշե Չարենցը:

Անցյալի սին փառքն իր
Քարավանին բարձած՝
Ու՞ր էր մղվում մարդկանց
Բարքերից ընդվզած,
Հերոսը Վարպետի,
Կամ անաստված դարի
Մղձավանջում դժգույն
Ի՞նչ թախիժ էր պատել
Տերյանի ջինջ հոգուն.
Նա, ով Մեր է զգում
Արթուն արտի խորքում,
Էլ չի կարող ատել,
Ուրիշներին դատել,
Եվ լքում է, ավա՜ղ՝
Հեռանալով խաղաղ...
Հսկում է չարն արթուն,
Օրհասական ջանքով,
Վերջին հանգրվանի
Դիրքերը իր բոլոր,
Երբեք չի հանդուրժում,
Երբ լուսավոր խոսքով
Իր սահմանն է խուժում
«Ոմն պոետ» մի նոր:
Դիմում է նա թունոտ
Ամեն խարդավանքի,
Որ այդ Լույսի, Սիրո
Նոր աղբյուրը փակի:
Հնարքներից մեկն էլ
Պոետիկներն են կեղծ,
Որ հասկանալի են
Միայն իրենք իրենց:
Ամեն Սևակի դեմ՝

Բազում հակասակ,
Ամեն Շիրազի դեմ՝
Բազում հակաշիրազ.
Բեդուն է հիրավի
Արգանդը չարության՝
Ըստ իր նենգ պատկերի
Եվ իր նմանության:
Բարբառում են նրանք,
Իբրև նոր տաղանդներ
Կամ էլ քերթողական
Նորանոր աղանդներ,
Պահանջում են պարզև,
Մրցանակ ու կոչում,
Ինչպես սիրամարզն է
Իր սուր ձայնով ճշում:
Անկարող են սակայն
Երգել սրտի խորքից,
Քանզի չարը համառ
Բոթում է միշտ կողքից,
Որ բիզնեսն է միայն
Այս աշխարհի արքան,
Ապրանք պիտի լինի
Խոսքը պոետական,
Ինչպես կտավ, կճուճ,
Ինչպես գորգ ու կերպաս.
Ներկարարից, չարչուց
Դուք ինչո՞վ եք պակաս...
Իսկ երբ սպառվում են
Չարի միջոցները,
Դիմակն է բիրտ մահվան
Խաղում իր սև դերը...

Ահա ձեր առաջ է
Ավետիսն այս բարի,
Որ այսուհետ կարճ են
Պիղծ ձեռքերը չարի.
Հարկ չի լինի արդեն
Չարի դեմ կռվելու,
Քանզի խավարն անդեն՝
Լույսով է ցրվելու:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողջույնի խոսք	3
Մեկ – մեկ + մեկ = մեկ.....	4
Հիտուս	5
Տերունական աղոթք	6
Աղոթք առ Աստվածամայր	9
Մուրիա	10
Արևագալի հիմն-աղոթք	11
Ես կամենում եմ	13
Մաղթանք	14
Կամոքն Աստծո և անցյալի մեծերի	15
Ինչու՞ ոչ	17
Տե՛ր, ների՛ր նրանց	18
Մայա	20
Չարի զենքերը	21
Էս կարգի՝ վարք չարքի	22
7 անգամ 70	26
2000 տարի	27
Ոգու սով	29
Մայաթ-Նովա	31
Կռիվ-կռիվ	32
Առակ ձկնիկի մասին	34
Կշման օրը	37
Չարմանալի նմանություն	38
Քառասուն տարի առաջ	40
Հիմա	41
Քառասուն տարի հետո	42
Հրաժեշտի խոսք	43